Վարչության պետը

1. Ապահովում է ՀՀ Վայոց ձորի մարզում (այսուհետ՝ Մարզ) գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական օժանդակության ծրագրերի իրագործումը.
2. Ապահովում է միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը և նրանց կողմից մարզում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի իրագործմումը.
3. Ապահովում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքները, ջրատնտեսական և ոռոգման կազմակե
4. Ապահովում է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների ագրարային ոլորտի տնտեսվարող այլ սուբյեկտների արտադրության կազմակերպմա աշխատանքները.
5. Ապահովում է պարարտանյութերի, վառելանյութի, սերմերի, տնկանյութերի, թունաքիմիկատների, անասնագլխաքանակի վերաբերյալ պահանջարկի ամփոփումը և պետական համակարգի լիազոր մարմին ներկայացումը,
6. Ապահովում է գյուղատնտեսական արտադրանքի մթերումն ու իրացումը.
7. Ապահովում է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման
8. Ապահովում է բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի բնագավառում պետական լիազորված մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը.
9. Ապահովում է Մարզի տարածքում բնապահպանական օրենսդրության կատարումը.
10. Ապահովում է Մարզպետի աշխատակազմի համագործակցությունը բնապահպանական խնդիրների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ.
11. Ապահովում է Մարզում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման աշխատանքները և համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցությունը.
12. Ապահովում է Մարզի տարածքում բնական պաշարներ օգտագործող օբյեկտների և սուբյեկտների գործունեությանը օժանդակումը.
13. Ապահովում է Մարզում պետական ծրագրերի իրականացումը՝ անտառների և անտառային հողերի պահպանության և օգտագործման նպատակով.
14. Ապահովում է Մարզի վարչական տարածքներում անտառային հրդեհների մարման աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում, մասնագիտացված ծառայությունների, անտառօգտագործողների և բնակչության ներգրավվումը.
15. Ապահովում է Մարզի տարածքում բնական աղետների, մարդ-վայրի բնություն կոնֆլիկտի հետևանքների ուսումնասիրության աշխատանքները, աղետների և վայրի կենդանիների կողմից պատճառված վնասների չափերի գնահատումը.

16. Ապահովում է Մարզի համայնքների համայնքային սեփականություն հանդիսացող հողերի բերրիության, հողի օգտակար հատկությունների պահպանման, բարելավման և արդյունավետ օգտագործման աշխատանքները.
17. Ապահովում է Մարզում գյուղատնտեսական կենդանիների հաշվառման, Մարզի տարածքի սերմնաբուծական կազմակերպությունների տոհմաբուծարանների և արհեստական սերմնավորման կայանների գործունեության աջակցությունը.
18. Ապահովում է Մարզում հակաանասնահամաճարակային կանխարգելիչ և հարկադիր միջոցառումների իրականացումը.
19. Ապահովում է Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.
20. Ապահովում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթներ.